4637

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀՀ ԱՆԴՄ-03/2025

ք. Երևան **«15» հունվար 2025թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն (այսուհետ՝ Դրամաշնորհ տրամադրող)՝ ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Տիգրան Արեյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Անահիտ Աբրահամյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների եւ դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, 2024 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060 որոշումը (այսուհետ՝ որոշում), բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժնի 03 խմբի 02 դասի «1123. Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագրի «11002. Թարգմանչական ծառայություններ» միջոցառման գծով թարգմանչական ծառայություններ ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Դրամաշնորհ տրամադրողը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Դրամաշնորհ ստացողին հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 250 339 000(երկու հարյուր հիսուն միլիոն երեք հարյուր երեսունինը հազար) դրամ գումար՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, իսկ Դրամաշնորհ ստացողը պարտավորվում է «1123. Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագրի «11002. Թարգմանչական ծառայություններ» միջոցառման շրջանակներում իրականացնել հետևյալ միջոցառումները (մատուցել հետևյալ ծառայությունները).

1.1.1. ՀՀ, ԵՏՄ/ՄՄ, ԵՄ իրավական ակտերի, ՀՀ միջազգային պարտավորությունների համաձայն ներկայացվող ազգային զեկույցների, ՀՀ պետական մարմինների կողմից միջազգային կառույցներ ներկայացվող և այդ կառույցների կողմից ՀՀ մարմիններ ներկայացվող փաստաթղթերի, այլ պետությունների հետ ՀՀ երկկողմ հարաբերությունների շրջանակներում դատական ակտերի եւ հարակից փաստաթղթերի, ՀՀ վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների եւ հանձնարարվող այլ առանցքային

փաստաթղթերի, ՀՀ վերաբերյալ միջազգային և միջկառավարական կազմակերպությունների կողմից ներկայացվող զեկույցների, իսկ ՀՀ վարչապետի, ՀՀ Նախագահի կամ լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարությամբ նաեւ այլ առանցքային փաստաթղթերի թարգմանությունների իրականացում՝ հայերենով, անգլերենով, ռուսերենով, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաեւ այլ օտար լեզուներով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Դրամաշնորհ տրամադրողն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Դրամաշնորհ ստացողի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու նրա բնականոն գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների վերաբերյալ:

2.1.2. Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում սահմանել բացահայտված թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ:

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Դրամաշնորհ ստացողը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացնելու.

բ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին:

2.1.4. Դրամաշնորհ ստոցողից պահանջել ներկայացնելու Ծրագրի կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը և տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդրող տարվա փետրվարի 7-ը:

2.2. Դրամաշնորհ ստացողն իրավունք ունի.

2.2.1. Պահանջել Դրամաշնորհ տրամադրողից սույն պայմանագրի 1.1. կետով սահմանված գումարը:

2.2.2. Դրամաշնորհ տրամադրողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. Տեղեկացնել Դրամաշնորհ տրամադրողին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում առաջացած խնդիրների մասին:

2.3. Դրամաշնորհ տրամադրողը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել դրամաշնորհ ստացողին:

2.3.2. Իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Դրամաշնորհ ստացողը պարտավոր է.

2.4.1. Կանոնադրությամբ սահմանված գործունեությունն իրականացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.3. Կատարել Դրամաշնորհ տրամադրողի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.4. Դրամաշնորհ տրամադրողին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ:

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.6. Դրամաշնորհի պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո Կենտրոնը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը :

3. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

3.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության և պայմանագրի կամ դրա մի մասի արդյունքների ընդունման վերաբերյալ եզրակացության ստորագրմամբ:

3.2. Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Դրամաշնորհ տրամադրողը Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Դրամաշնորհ ստացողին է տրամադրում իր կողմից ստորագրած հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.3. Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Դրամաշնորհ տրամադրողը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Դրամաշնորհ ստացողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Իրականացվող միջոցառումների դիմաց Դրամաշնորհ ստացողին վճարումները կատարվում են անկանխիկ ձևով, ամսական կտրվածքով, ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 7-րդ աշխատանքային օրը՝ համաձայն ֆինանսական պարտավորությունների հատկացման ժամանակացույցի (հավելված):

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կենտրոնը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով, ընդ որում, տուգանքի վճարումը Կենտրոնին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2025 թվականի հունվարի 3-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համաճարակը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները ունեն իրավաբանական ուժ, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Սույն պայմանագրով կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Դրամաշնորհի տրամադրող	Դրամաշնորհի ստացող
ՀՀ արդարադատության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն Հ/Հ 900011045490 ՀՎՀՀ 02506264 Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Տ. Արեյան (Ստորագրություն) Կ.Տ	«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երեւան, Կոմիտաս 54բ Հ/Հ 900018004839 Կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 01242245 Տնօրեն՝ Ա. Աբրահամյան (Ստորագրություն) Կ.Տ

Հավելված
«15» հունվարի 2025թ.
Կնքված դրամաշնորհի № պայմանագրի

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի 2025 թվականի «1123. Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագրի «11002. Թարգմանչական ծառայություններ» միջոցառման ֆինանսական հատկացումների ժամանակացույց

Հազար դրամ

Ծրագրի միջոցառման անվանումը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2025թ-ի պետական բյուջեից, ընդ որում											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի թարգմանչական ծառայությունների ծրագիր	250,339.0		31,257.5	62,515.0	83,811.7	104,248.3	125,115.0	145,998.3	166,881.7	187,765.0	208,623.0	229,481.0	250,339.0

Դրամաշնորհի տրամադրող

ՀՀ արդարադատության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011194223
ՀՎՀՀ 02506264

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
Տ. Արթաս

(Ստորագրություն)
Կ.Տ

Դրամաշնորհի ստացող

«Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության թարգմանությունների կենտրոն»
ՊՈԱԿ
ք. Երեւան, Կոմիտաս 54բ
Հ/Հ 900018004839
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 01242245

Տնօրեն՝
Ա. Արրահամյան

(Ստորագրություն)
Կ.Տ